

ՆՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ. ԹԵ՝ ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ
(Վիճակի կերպի արտացոլումը գերմաներենի և
հայերենի բայի համակարգում:
Ձուգադրական վերլուծություն)

Գերմաներենի բայի համակարգում գործում են մեկ ներգործական սեռի (Aktiv-ի) և երկու կրավորականների (Vorgangspassiv-ի ու Zustandspassiv-ի) համեմատելի զուգահեռ ձևեր: Դիտարկելով գերմաներենի համախումբ Infinitiv-ների (բայի անորոշ ձևերի) հավելված աղյուսակը՝ նկատում ենք, որ ի տարբերություն Aktiv-ի և Vorgangspassiv-ի (ընթացքի կրավորականի), որտեղ միմյանց համապատասխանող Infinitiv և ստացվող դիմավոր ձևերի համեմատության դեպքում հստակ երևում է զուգահեռ համաժամանակությունը, նույն հորիզոնականի վրա գտնվող sein+Partizip II կապակցությամբ Zustandspassiv-ի (վիճակի կրավորականի) ձևերում նախորդների նկատմամբ ընկալելի է մեկ ժամանակային «հերթափոխի» տրամաբանական վաղաժամանակությունը՝ անկախ այդ ժամանակի մեծությունից, և Zustandspassiv-ի Infinitiv ներկան ժամանակի իմաստով համապատասխանում է նախորդների անցյալի մակարդակին: Դմմտ. նրանց նաև ստորև տրվող անորոշ ու դիմավոր ձևերը.

<i>Aktiv</i>	<i>Vorgangspassiv</i>	<i>Zustandspassiv</i>
Infinitiv I: bauen	gebaut werden	gebaut sein
կառուցել,	կառուցվել,	կառուցված լինել
կառուցելիս լինել	կառուցվելիս լինել	
Infinitiv II: gebaut haben	gebaut worden sein	gebaut gewesen sein
կառուցած լինել	կառուցված լինել	(*)կառուցված եղած լինել ¹

Վերը բերված յուրաքանչյուր Infinitiv-ից, որպես կանոն, կազմվում է երկուական ժամանակային ձև՝ մեկը ներկայի, իսկ մյուսը՝ անցյալի համար: Դետևաբար, Infinitiv I-ի հիման վրա կազմվում են գերմաներենի Präsens (*հայերենի համար*՝ անկատար ներկա, հարակատար ներկա) և Präterit (անկատար անցյալ, հարակատար անցյալ, *նաև*՝ անցյալ կատարյալ, *հազվադեպ*՝ վաղակատար ներկա) ժամանակային ձևերը, իսկ Infinitiv II-ի հիման վրա՝ Perfekt (վաղակատար ներկա, *նաև*՝ անցյալ կատարյալ) և Plusquamperfekt (վաղակատար անցյալ) ժամանակային ձևերը: Դմմտ.

<i>Aktiv</i>	<i>Vorgangspassiv</i>	<i>Zustandspassiv</i>
Präs.: Er baut das Haus.	Das Haus wird gebaut.	Das Haus ist gebaut.

¹ Փակագծավոր աստղանիշով (*) բերված ձևերը վիճարկելի են:

Նա կառուցում է տունը:	Տունը կառուցվում է:	Տունը կառուցված է:
Prät.: Er baute das Haus.	Das Haus wurde gebaut.	Das Haus war gebaut.
Նա կառուցում էր (կառուցեց) տունը:	Տունը կառուցվում էր (կառուցվեց):	Տունը կառուցված էր:
Perf.: Er hat ... gebaut.	Das Haus ist gebaut worden.	Das Haus ist gebaut gewesen.
Նա կառուցել է (կառուցեց) ...	Տունը կառուցվել է (կառուցվեց):	Տունը կառուցված է եղել:
Plus.: Er hatte ... gebaut.	Das Haus war gebaut worden.	Das Haus war gebaut gewesen.
Նա կառուցել էր...	Տունը կառուցվել էր:	Տունը կառուցված էր եղել:

Բերված ձևերի, ինչպես նաև հավելված աղյուսակի լուկ դիտարկումից իսկ երևում է, որ հայերենի «կառուցված լինել» կրավորական անցյալի անորոշ ձևին գերմաներենում միաժամանակ համապատասխանում են ինչպես Vorgangspassiv-ի Infinitiv II ձևը (gebaut worden sein), այնպես էլ Zustandspassiv-ի Infinitiv I ձևը (gebaut sein), այսինքն հայերենում որպես կրավորական անորոշ «նույնանում են» գերմաներենի այդ զույգ Passiv-ները: Բայց դա սոսկ արտաքին նմանություն է, որն առկա է միայն հայերենում, այն էլ՝ միմիայն անորոշ ձևում: Իսկ գերմաներենում նրանցից կազմվող ժամանակային ձևերի հայերեն համարժեքներում և արդեն ակներև է նրանց միջև եղած փաստացի տարբերությունը և՛ ձևակազմությամբ, և՛ բովանդակությամբ: *Sten* և *himut*. այդ ձևերը վերը բերված նախադասություններում՝

Vorgangspassiv

Perf.: Տունը կառուցվել է:

Plus.: „ կառուցվել էր:

Zustandspassiv

Präs.: Տունը կառուցված է:

Prät.: „ կառուցված էր:

Եվ փաստորեն գերմաներենում համեմատվող այդ զույգ ձևերի միջև եղած տարբերությունը և՛ Infinitiv-ների, և՛ ժամանակային ձևերի կառույցներում Vorgangspassiv-ի գործողության ընթացքի գաղափարը մատուցող werden օժանդակ բայի Partizip II-ի worden հնատիպ ձևի առկայությունն է:

Ինչ վերաբերում է Zustandspassiv-ի *gebaut sein* (= կառուցված լինել) և *gebaut sein werden* (= ապագայում կառուցված լինել) անորոշ ձևերին, ապա նրանց sein օժանդակ բայը (տվյալ պարագայում՝ հանգուցային բայը) ինքն է արտահայտում նախապես ներգործված, որոշակի ազդեցության ենթարկված առարկայի ինչ-որ վիճակի մեջ գտնվելու իմաստը: Իսկ հիմնական բայի Partizip II-ի *gebaut* ձևն ունի գործողության ավարտված լինելու կառուցվածքային իմաստ, և *gebaut sein*-ով արտահայտվող վիճակը նախապես ընթացած, բայց և արդեն ինչ-որ մակարդակով, այդ թվում, ինչո՞ւ չէ, նաև լրիվ ավարտված գործողության պատրաստի և հարաբերականորեն հարատևող արդյունքն է

(օր. *Հինը քանդված է, և նորը կառուցված*): Ահա թե ինչու գերմաներենի Vorgangspassiv և Zustandspassiv Infinitiv-ների վերոհիշյալ ձևերը հայերենում նմանվում են: Բայց նմանվում են միայն անորոշ ձևերը և ոչ դիմավորները: (Տես և հմտ. վերը բերված նրանց անորոշ և դիմավոր ձևերը. երկուսի մոտ էլ անորոշն ստացվում է *կառուցված լինել*, բայց դիմավոր ձևերը՝ Vorgangspassiv-ում՝ *կառուցվել է*, իսկ Zustandspassiv-ում՝ *կառուցված է*):

Գերմաներենում sein+Partizip II կապակցության կրավորական իմաստը մատուցվում է ոչ միայն հիմնական անցողական բայի Partizip II-ով, այլ նաև sein հանգուցային բայով, որը ևս տվյալ պարագայում օժանդակում է կրավորական իմաստի արտահայտմանը՝ հակադրություն (Opposition) կազմելով haben օժանդակ բայի նկատմամբ, որով արտահայտվում է ներգործական իմաստ. հմտ. *gebaut haben* (= *կառուցած լինել*) և *gebaut sein* (= *կառուցված լինել*), կառույցներ, որոնցում միևնույն հիմնական բայի Partizip II ձևն է, և որոնցից առաջինը Infinitiv II է (Infinitiv Perfekt Aktiv), իսկ երկրորդը Infinitiv I (Infinitiv Präsens Zustandspassiv): Այնպես որ գերմաներենում ևս տարբեր սեռերի անորոշ դերբայների միջև եղած փոխադարձ կապերը ոչ միայն զուգահեռ են, այլ նաև խաչաձև, հետևաբար՝ միահյուսված:

Նմանատիպ հարաբերակցություն գոյություն ունի նաև Infinitiv Futur I Zustandspassiv-ի և Infinitiv Futur II Vorgangspassiv-ի միջև, որոնցում առկա են վերը քննարկված Infinitiv-ները: Սակայն այս դեպքում արդեն նույնանում են այդ բայերի դիմավոր ձևերի հայերեն համարժեքները: Դմտ.

Futur I Zustandspassiv: Das Haus wird gebaut sein.

Տունը կառուցված կլինի:

Տունը կառուցված է լինելու:

Futur II Vorgangspassiv: Das Haus wird gebaut worden sein.

Տունը կառուցված կլինի:

Խնդրո առարկա նմանությունը գալիս է նրանից, որ Infinitiv II Vorgangspassiv կառույցի հիման վրա կազմվող դիմային ձևերում գործողության ընկալվող *ընթացքի* հետ միասին, ինչը տալիս է Vorgangspassiv-ի werden օժանդակ բայը, առկա է լինում նաև այդ գործողության առնվազն որոշակի աստիճանով ավարտված լինելը, ինչն էլ ներկայացվում է գործողության ընթացք ցույց տվող werden օժանդակ բայի Partizip II-ի հմատիպ worden ձևով՝ իր sein (ist, war) օժանդակ բայի ուղեկցությամբ: Հետևաբար, նախապես ներգործված կամ կրավորական առարկան մեզ հայտնվում է իր *վիճակի կարգավիճակով*: Գերմանացի քերականագետ Ուլրիխ Էնգելն Infinitiv II Vorgangspassiv-ի *gebaut worden sein* կառույցի հիման վրա կազմվող ist gebaut worden ձևի կապակցությամբ գրում է. «Երևույթի առնչությամբ դիտարկվող «*կառուցելու*» գործողությունը պատկերվում է որպես իր ընթացքի մեջ ինչ-որ

ժամանակակետում ստույգ ավարտված ու մինչև ժամանակ զրուցակիցների համար որպես հետևանք մնացած»:²

Գերմաներենի *gebaut worden sein* և *gebaut sein* անորոշ կապակցությունների «կառուցված լինել» համարժեքը հայերենում ընկալվում է հիմնականում վիճակի կրավորականի իմաստով: Գերմաներենում էլ գործողության ընթացքի իմաստն արտահայտվում է լոկ կրավորականի *werden* օժանդակ բայի առկայությամբ: Բայց Infinitiv Futur II Vorgangspassiv-ից կազմվող Futur II ժամանակային ձևում Infinitiv II-ի առկա ձևով ներկայացվում է ապագա՝ խոսելու պահի և նախատեսված հեռավոր Futur I-ի միջև ընկած սահմանազատված ժամանակահատվածում նախապես ձեռնարկված ու հարաբերականորեն ավարտված գործողությունը՝ իր հարաբերականորեն հարատևող կամ մնայուն արդյունքով: Հմմտ.

Futur I Vorgangspassiv: Das Haus wird gebaut werden.

Տունը կկառուցվի

(կառուցվելիս կլինի, կառուցվելու է):

Futur II Vorgangspassiv: Das Haus wird gebaut worden sein.

Տունը կառուցված կլինի:

Նույն երևույթը վերագրվում է նաև Konditionalis II -ին՝ Konditionalis I-ի նկատմամբ: Հմմտ.

Konditionalis I Vorgangspassiv: Das Haus würde gebaut werden.

Տունը կկառուցվեր

(կառուցվելիս կլիներ, կառուցվելու էր):

Konditionalis II Vorgangspassiv: Das Haus würde gebaut worden sein.

Տունը կառուցված կլիներ:

Համեմատելով գերմաներենի սահմանական եղանակի Aktiv-ի և Vorgangspassiv-ի ու Zustandspassiv-ի հարացույցները և ներկայացնելով նաև նրանց համարժեքները հայերենում՝ համոզվում ենք, որ մեր մայրենիում ևս ձևերն իրարից ակներև զանազանվում են: Սակայն յուրօրինակ մասնություն կա բերված երեք ձևերի հայերեն համարժեքների միջև. դրանք Vorgangspassiv Futur II-ի և Zustandspassiv Futur I-ի ու Futur II-ի համարժեքներն են (կառուցված կլինի, (*)կառուցված [եղած] կլինի): Դա ստացվում է հենց նրանից, որ Zustandspassiv-ի դիմավոր ձևերի իմաստի մեջ (Aktiv-ի ու Vorgangspassiv-ի համապատասխան նույնանուն ժամանակային ձևերի հետ համեմատությամբ) առկա են որոշակի, թեկուզ և չնչին, նախաժամանակությունը, անցյալ լինելը և արդեն ավարտված գործողությունից որպես հետևանք կամ արդյունք մնացած վիճակը: Դրա համար էլ ձևով մեծանվում են, իսկ իմաստով բացարձակ նույնա-

² Ulrich Engel: Deutsche Grammatik, Heidelberg, 1996, S. 455.

նում Zustandspassiv Futur I-ի և Vorgangspassiv Futur II-ի դիմավոր համարժեքները հայերենում (*կառուցված կլինի*): Կառուցվածքով սրանց ընդհուպ մոտեցող Zustandspassiv Futur II թեև հազվադեպ գործածվող, բայց և առկա ու ամփոփելի ժամանակային ձևը և նրա՝ մեր կողմից ներկայացվող հայերեն համարժեքը փաստորեն, ասես, միմյանց բառացի վերարտադրությունն են՝ *wird gebaut gewesen sein*=(*)*կառուցված եղած կլինի*, ձևեր, որոնց հայերեն տարբերակն այսօր գուցե թե մերժված է և հանիրավի օտարված է արևելահայերեն գրական լեզվից լոկ այն պատճառով, որ հայերենում «*կառուցված կլինի*» կապակցությամբ արդեն իսկ արտահայտվում է գործողության ավարտված լինելը ինչպես անցյալում, այնպես էլ ապագայում՝ համեմատած հաջորդող ժամանակահատվածի հետ: Դրա հիման վրա էլ *իրև թե* արդարացվում է հայերեն այդ կառույցում «*եղած*» բայածևի բացակայությունը: Համեմայնդեպս, մեր կարծիքով խրախուսելի չէ այդ մերժելի թվացող ձևից կտրուկ ու միանշանակ հրաժարվելը. պետք է հաշվի առնել նրա հույժ կարևորությունը թեկուզ և խիստ հազվադեպ ի հայտ եկող վաղանցյալ (և ոչ՝ *վաղակատար անցյալ*) առանձնահատուկ դեպքերի համար: Հարկ է նկատել, որ գերմաներենի բայի Aktiv սեռի համակարգում բացակայում է *gebaut gehabt haben* [=](*)*կառուցած եղած լինել*] անորոշ կառույցը: Բայց այդուհանդերձ, ի թիվս այլ նշանավոր քերականների, այդ արտասովոր կառույցին ու նրա հիման վրա կազմվող դիմավոր ձևերին անդրադարձել են նաև անվանի լեզվաբաններ Վ.Ադոնին և Ու.Էնգելը՝ այդ հազվադեպ ի հայտ եկող կառույցները համարելով բաղարկություն³: Օրինակ՝

Hier hast du deine Hundemarke wieder! *Hab sie ganz vergessen gehabt.*
(E.M.Remarque: Drei Kameraden, Moskau, 1960, S. 106.) - Վերցրու շան պատկերով թալիսմանդ: Լրիվ *մոռացել էի* այն:

Ich *hatte* meinen Tornister *nicht* vorschriftsmäßig gepackt *gehabt*... (Նույն տեղում, էջ 21:) - Ես իմ կաշեպարկը պահանջված ձևով *փաթաթած չէի եղել (չէի փաթաթել)*...

Es waren nur zwölf Augen, und er *hätte* mit fünfzehn *gewonnen gehabt* (Նույն տեղում, էջ 368:) - Եղածը միայն տասներկու միավոր էր, իսկ նա *շահած կլիներ (կշահեր)* տասնհինգով:

Ich *habe* es wirklich *nicht geplant gehabt*, aber plötzlich war ich in der Rückertgasse. (Christine Nöstlinger: Die Ilse ist weg, Langenscheidt, Berlin, 1995, S. 78.)

³ Տե՛ս W.Admoni: Der deutsche Sprachbau, Leningrad, 1972, SS. 191-192.

U. Engel: Deutsche Grammatik, Heidelberg, 1996, S. 421.

Այս կապակցությամբ մամրամասները տես նաև Հ.Ա.Դուկասյան, Գ.Դ.Դուկասյան, «Գերմաներենի անցյալի անորոշի (Infinitiv II) դրսևորումները բաղարկություններում», Բանբեր Երևանի համալսարանի, թիվ 2 (101), Երևան, 2000, էջ 188-192:

-Ես դա իրականում *նախատեսած չէի եղել* (= *չէի նախատեսել, չէի պլանավորել, չէի որոշել*). Բայց հանկարծ հայտնվեցի Ռյուքերտի նրբանցքում:

Միաժամանակ պետք է ուշադրություն հրավիրել այն համագամանքի վրա, որ գերմաներենում լիարժեք գործում է բաղարկություն համարվող այդ *gebaut gehabt haben* [=(*)*կառուցած եղած լինել*] Aktiv անորոշ կառույցի համապատասխան Passiv կառույցը՝ վերը հիշատակված Zustandspassiv Infinitiv II-ը [*gebaut gewesen sein* = (*)*կառուցված եղած լինել*] իր դիմավոր ձևերով հանդերձ / օր. *Das Haus ist (war) gebaut gewesen* = Տունը *կառուցված է (էր) եղել*]: Դէ՛ որ հայերենում ևս, վերջին հաշվով, հանրահայտ, համրամատչելի և ընդունելի ձևեր են մաս

<i>հայտնի լինել</i>	ու	<i>հայտնի եղած լինել</i>
<i>անհայտ լինել</i>	ու	<i>անհայտ եղած լինել ...</i>

Եվ եթե, օրինակ, *անհայտ* ածականը փոխարինենք հարակատար դեր-բայով արտահայտված մեկ այլ ածականով, տվյալ դեպքում՝ *մոռացված* (որն իմաստով այնքան մոտ է *անհայտ* -ին), ապա այս նոր կառույցը պետք է որ վերևիցների նման ընդունելի լինի: Հետևաբար կունենանք՝

<i>մոռացված լինել</i>	ու	<i>մոռացված եղած լինել...</i>
-----------------------	----	-------------------------------

Վերևում ձախ կողմում տրված անորոշների հիման վրա կազմվող անկատար ներկայի դիմավոր ձևերը կլինեն՝

<i>հայտնի է</i>	կամ	<i>հայտնի է լինում</i>
<i>մոռացված է</i>	կամ	<i>մոռացված է լինում ...</i>

Լիարժեք գործածություն ունեն մաս նրանց անկատար անցյալ և անցյալ կատարյալ ժամանակային ձևերը՝

<i>հայտնի էր</i>	կամ	<i>հայտնի էր լինում</i>
<i>մոռացված էր</i>	կամ	<i>մոռացված էր լինում</i>
<i>հայտնի եղավ, անհայտ եղավ,</i>		<i>մոռացված եղավ ...</i>

Վերևում աջ կողմում տրված այդ կառույցների անցյալի անորոշ ձևերի հիման վրա կազմվում են վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակային ձևերը՝

<i>հայտնի է եղել</i>	և	<i>հայտնի էր եղել</i>
<i>անհայտ է եղել</i>	և	<i>անհայտ էր եղել</i>
<i>մոռացված է եղել</i>	և	<i>մոռացված էր եղել ...</i>

Գործածական են մաս նրանց ապակատարի ներկա ու անցյալ ժամանակային ձևերը՝

<i>հայտնի է լինելու</i>	և	<i>հայտնի էր լինելու</i>
<i>անհայտ է լինելու</i>	և	<i>անհայտ էր լինելու</i>
<i>մոռացված է լինելու</i>	և	<i>մոռացված էր լինելու ...</i>

Անառարկելի են նրանց պայմանական կամ ենթադրական եղանակի ապառնի ու անցյալի ապառնի ժամանակային ձևերը՝

հայտնի կլինի
մոռացված կլինի

և
և

հայտնի կլինե
մոռացված կլինե...

Այլ բան է, որ ցանկություն է լինում խուսափել գերբաղադրյալ և անբարեհունչ թվացող կառույցներից և ընտրել համեմատաբար պարզ ձևերը: Բայց նրանցից յուրաքանչյուրը առանձին ու այլ ժամանակ արտահայտող ինքնուրույն ձև է: Համտ.

(*)մոռացված եղած կլինի
մոռացված կլինի
կմոռացվի

և
և
և


(*)մոռացված եղած կլինե
մոռացված կլինե
կմոռացվե...

Նախադասության մեջ բայական այս կառույցներին, հանգամանքներից ու իմաստից ելնելով, կարող են ուղեկցել նաև համապատասխան ժամանակի դասիչներ՝ *հիմա, այժմ, այնժամ, այն ժամանակ, արդեն, վաղուց, արդեն վաղուց, շուտով, հետո, հետագայում, մինչ այդ, նախքան այդ, դեռ դրանից էլ առաջ, զրինակներ*: Այս տեսությունը ... *մոռացված է եղել / մոռացված էր եղել: ... մոռացվել է / մոռացվել էր: ... մոռացված է / մոռացված էր: ... մոռացվում է / մոռացվում էր: ... մոռացվելու է / մոռացվելու էր: ... կմոռացվի / կմոռացվե: ... մոռացված կլինի / մոռացված կլինե: ... (*)մոռացված եղած կլինի / (*)մոռացված եղած կլինե:*

Գերմաներենում ևս Zustandspassiv Futur II ժամանակային ձևից խուսափելու հնարավորություն կա. այնտեղ այդ նույն իմաստն արտահայտվում է նաև Vorgangspassiv Futur II ժամանակային ձևի *wird gebaut worden sein* նույն մակարդակի բաղադրյալ կառույցով: Համաձայն իմաստով երկու ձև ... եվ նրանցից յուրաքանչյուրը պետք է որ հավատարիմ մնա իր առաքելությանը և ծառայի իր համակարգին: Բանն այն է, որ Vorgangspassiv Futur II-ով միաժամանակ արտահայտվում են ինչպես կատարվող գործողության ընթացքը, այնպես էլ տվյալ նախադասության ենթակայի վիճակը, իսկ Zustandspassiv Futur II-ով՝ միմիայն նախադասության ենթակայի վիճակը:

Թեև գերմաներենում ու հայերենում բայի՝ ներկայումս գործող քերականական կարգերից եղանակներն ու ժամանակային ձևերը և առանձին այլ երևույթներ ոչ բացարձակապես են դրսևորվում իրար նման, քանի որ յուրաքանչյուր լեզու ունի իր քերականական արտահայտչամիջոցները, ձևերն ու առանձնահատկությունները, այնուամենայնիվ երկու լեզուներում էլ գործում են քերականական ժամանակային բացարձակ ու ոչ բացարձակ ձևեր, որոնց ճշգրիտ հերթագայությամբ վերանում է միախուսված ժամանակների անցանկալի խառնաշփոթը: Այդ օժտվածությունն ունեն, անշուշտ, աշխարհի ձևավորված և հաղորդակցության ու տեխնիկայի դարիս ոգուն համապատասխան զարգացած բոլոր լեզուները:

ԱՆՈՐՈՇ ԴԵՐՔԱՅԸ ԵՎ ՆՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱՄԱՆԵՆՈՒՄ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳԱՆՈՒԹՅԱՐ

A K T I V
(ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՐ)P A S S I V
(ԿՐԱԿՈՐԱԿԱՆ ՍԵՐ)

- ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ: 1. Անկյունավոր փակագծերում բերված Inf. Fut. I և Inf. Fut. II Aktiv ու Passiv բոլոր ձևերը գերմաներենում նախադասության մեջ ունենում են միմյանց հիմնավոր գործածություն: Իսկ նախադասության մեջ նույնիմաստ Infinitiv-ի առկայության անհրաժեշտության դեպքում այդ Infinitiv-ներին փոխարինում են համապատասխանաբար իրենց Inf. I և Inf. II ձևերը՝ հաճախ համապատասխան ժամանակային ցուցիչի ուղեկցությամբ:
2. Ցուրաջանցյոր ելակետային Inf. I համարվում է ներկա, նրանից դեպի ձախ գտնվող անցյալ, իսկ դեպի աջ ընկածները ապառնի: